ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 փետրվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

14
(2680)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ՕՐԱԹԵՐԹԸ ԴԱՐՁԱՎ 12 ՏԱՐԵԿԱՆ

2011 թվականի փետրվարի 1-ին լույս տեսավ «Ժողովուրդ» օրաթերթի առաջին համարը, որն անվճար բաժանվեց բոլոր կրպակներին: Օրաթերթի առաջին համարի շապիկին գրված էր. «Առանց վերամբարձ խոսքերի եւ «սեթեւեթանքների», միանգամից կարող ենք վստահեցնել, որ մեր թիկունքում չկա կանգնած որեւէ քաղաքական ուժ, անգամ ամենասուր աչքերով եւ գործիքներով նայելու դեպքում մեր թիկունքում չեն երեւա որեւէ օլիգարխի կամ օսլայած մազերով երիտասարդների ականջներ, թեւեր, ոտքեր եւ այլն: Մենք չունենք «պապաներ», չունենք թելադրողներ եւ պահանջներ ներկայացնողներ: Եւ պատահական չէ մեր կողմից ընտրված անունը՝ «Ժողովուրդ». այն լինելու է իսկապես բոլորի թերթը»: Անցել 12 տարի, եւ «Ժողովուրդ» օրաթերթը հավատարիմ է մնում իր անվանն ու կարգախոսին, այն է՝ «Օրաթերթ բոլորի եւ ամեն ինչի մասին»: Մենք չունենք տաբուներ, սիրելի եւ ատելի մարդիկ: Մեր գլխավոր սկզբունքն օբյեկտիվությունն է: «Ժողովուրդ» օրաթերթի եւ ArmLur.am լրատվականի խմբագրակազմը գիտակցում է մեծ պատասխանատվության արժեքը եւ իրացնում իր բաժին իշխանությունը՝ որպես չորրորդ իշխանություն: Շնորհավո՛ր մեր տոնը...

Ռուսաստանի ԱԳՆ -ն հունվարի 26-ին արձագանքել էր հայ-ադրբեջանական սահմանին ԵՄ դիտորդական նոր առաքելություն տեղակայելու որոշմանը՝հայտարարելով, որ ԵՄ առաքելությունը կարող է աշխարհաքաղաքական առճակատման հանգեցնել: Թեեւ հայ հասարակական եւ փորձագիտական շրջանակների կողմից այս հայտարարությունը բուռն արձագանք ստացավ եւ շատ քննարկվեց, բայց Հայաստանի բարձրագույն իշխանությունը չի շտապում արձագանքել Ռուսաստանի այս հայտարարությանը: «Ժողովուրդ» օրաթերթը հունվարի 27-ին գրավոր հարցմամբ դիմել էր Հայաստանի ԱԳՆ ռուսական կողմի այս հայտարարության հետ կապված որեւէ արձագանք ստանալու համար: Մեր հարցմանը ՀՀ ԱԳՆ-ից տվել են խուսափողական պատասխան, որում ասվում է. «Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ ԵՄ մշտադիտարկման առաքելության վերաբերյալ հայկական կողմը արդեն իսկ հանրայնորեն իր դիրքորոշումը ներկայացրել է»: Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթն այս ընթացքում պարբերաբար կապ է հաստատել նաեւ ՔՊ-ական պատգամավորների հետ, սակայն նրանք կոչ էին անում սպասել ՀՀ ԱԳՆ-ի պաշտոնական արձագանքին: Եվ, ահա, օրեր անց միայն ՀՀ ԱԳՆ-ն նման կցկտուր արձագանք է տալիս, ընդ որում՝ եթե գրավոր հարցմամբ չդիմեինք, մեր ԱԳՆ-ն հավանաբար չէր էլ արձագանքի: Պարբերաբար բարձր ամբիոններից հակառուսական սուր հայտարարություններով հանդես եկող ՀՀ իշխանությունների այս լռությունն առնվազն տարօրինակ է եւ անհասկանալի:

15 զինվորներին կյանքից զրկելու գործով քննարկվում է սպայի հարցը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝հունվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղակայված N զորամասի ինժեներասակրավորային վաշտի անձնակազմի համար նախատեսված կացարանում տեղի ունեցած հրդեհի գործով նախաքննական մարմինը քննարկում է սպայի մեղադրանքի եւ խափանման միջոցի հարցը: Նախաքննական մարմինը քննարկել է այն հարցը, որ նա դեռ բուժման մեջ է, սակայն վերոնշյալ հանգամանքը հաշվի առնվել է, եւ առաջիկայում սպայի մասով կոնկրետ քայլեր կիրականացվեն: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝սպան հարցաքննվել է, իսկ թե ինչ է նա պատմել իրավապահներին, կներկայացնենք առաջիկայում: Նշենք, որ 2023 թվականի հունվարի 25-ին որոշում էր կայացվել ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ի նկատմամբ հարուցել հանրային քրեական հետապնդում՝ՀՀ քրեական օրենսգրքի 550-րդ հոդվածի 3-րդ մասով (Զինվորական պաշտոնեական անփութություն, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ), եւ հունվարի 26-ին ՀՀ ՊՆ N զորամասի թիկունքի պետ-հրամանատարի թիկունքի եւ կոմունալ շահագործման ծառայության գծով տեղակալ Գ.Ա.-ն կալանավորվեց:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը երեկ՝հունվարի 31-ին, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ենթակայությամբ գործող Ջրային կոմիտե է այցելել, ու, ըստ կառավարության լրատվական ծառայության տարածած հաղորդագրության, Փաշինյանը կոմիտե այցելել է կառույցի 2022-ի գործունեության հաշվետությունը քննարկելու նպատակով: «Ժողովուրդ» օրաթերթի՝կառավարությանը մոտ գտնվող աղբյուրները հուշում են, սակայն, որ նախարարություններ այցելելուց ու կատարողականին ծանոթանալուց հետո Փաշինյանն այժմ էլ որոշել է պետական բոլոր տեսակի (սկսած ամենափոքրից) գերատեսչություններով անցնել՝հասկանալու համար՝ինչ է կատարվում դրանց ներսում: Գործադրի մեր աղբյուրները փոխանցում են՝բանն այն է, որ Փաշինյանը մտադիր է գլխիվայր փոխել կառավարության բոլոր գերատեսչությունների ղեկավար-աշխատակիցներին, հետեւաբար որոշել է անձամբ շրջել ու հասկանալ, թե որտեղ ինչ է կատարվում: «Իսկ հասկանալու լավագույն ձեւը սեփական աչքով տեսնելն է, թե որ գերատեսչության ղեկավարը կամ աշխատակիցն իրեն ինչպես է դրսեւորում, պատրաստված է, թե ոչ, որտեղ է թերանում եւ այլն»,- ասաց մեր զրուցակիցը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ՝ Փաշինյանը, որ, դեռեւս նախորդ տարեվերջից սկսած, նախարարություններ էր այցելում ու հաշվետվություններ լսում, մի շարք նախարարների անակնկալի է բերել՝ասելով, որ վերջիններս իրեն ոչ թե արած աշխատանքները ներկայացնեն ու գլուխ գովեն, այլ խոսեն պլանավորած ու չիրականացրած աշխատանքներից: Չի բացառվում՝ առաջիկայում կառավարության ենթակայության տակ գտնվող ամենատարբեր օղակներում նոր տեղաշարժեր լինեն:

ԱՐՑԱԽ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԸ ՄԵՄԻՋ Է ՏԱՐԱԾՈՒՄ

«Արցախը ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ աշխարհին կապող տրանսպորտային միակ հանգույցի՝ Լաչինի միջանցքի մասով հայաստանյան իշխանությունների իրականացրած քայլերի մի մասը՝ տեսանելի, մյուս մասը անտեսանելի դաշտում է, հետեւաբար հնարավոր չէ ամբողջովին գնահատական տալ Արցախը շրջափակումից դուրս բերելու համար տարվող աշխատանքների համալիր գործողություններին»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնել է իրավաբաշտպան Նինա Կարապետյանցը: Ինչ վերաբերում է բոլորիս համար տեսանելի քայլերին՝ իրականացվող թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի իշխանությունների կողմից, ապա դրանք հիմնականում ուշացած են ու թույլ:

Ըստ իրավապաշտպանի՝ եթե վարչապետ Նիկոլ Փաշինյանը հասարակությանը հուշելու տրամաբանությամբ է փորձում հասկացնել, թե Արցախը կարող է գոյություն ունենալ Ադրբեջանի կազմում, ապա նրա թիմակիցներն այդ մասին շատ ավելի պարզ են արտահայտվում: Չնայած իշխանությունների՝ Արցախի հարցի մասով ունեցած նման դիրքորոշմանը՝ այնուամենայիվ, մեր զրուցակցի համոզմամբ, այժմ մեծ հնարավորություն ունենք աշխարհին ցույց տալու, որ Արցախը որեւէ կարգավիճակով Ադրբեջանի կազմում չի կարող լինել:

Հայաստանը, շեշտում է Կարապետյանցը, պետք է կարողանա աշխատել միջազգային այն կառույցների հետ, որոնք հայանպաստ գործունեություն են ծավալում, քանի որ, բացատրում է, անգամ Եվրոպայում կան, այսպես ասած, հոգին ծախած իրավապաշտպան այնպիսի կառույցներ, որ իրենց իսկ կողմից հռչակած մարդասիրական սկզբունքներին չեն համապատասխանում:

«Ժողովուրդ» օրաթերթը այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել է իրավապաշտպան Նինա Կարապետյանցի հետ:

-Տիկին Կարապետյանց, 50 օր է, ինչ փակ է Արցախը ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ աշխարհին կապող տրանսպորտային միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը: Այս ընթացքում ամենատարբեր կառույցների կողմից դատապարտող հայտարարություններ են հնչել, բայց ճանապարհը շարունակում է փակված մնալ: Ըստ Ձեզ՝ ՀՀ իշխանության կողմից բավարար ու անհրաժեշտ քայլեր արվե՞լ են՝ փորձելու համար միջանցքն օր առաջ բացել:

-Իրականում արտաքին քաղաքականության մի մասը տեսանելի դաշտում է, մյուս մասը՝ ոչ: Ես կդժվարանամ ասել՝ անտեսանելիության դաշտում ինչ գործողություններ են իրականացնում թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի իշխանությունները, բայց տեսանելի դաշտում բազմաթիվ քայլեր անգամ եթե ճիշտ ուղու վրա են, շատ ուշացած եւ թույլ են լինում: Ցավալիորեն Հայաստանի Հանրապետությունը եւ Արցախը չեն օգտագործում այն ամբողջ գործիքակազմը, որ պետք է օգտագործել: Կդժվարանամ ամբողջական գնահատական տալ: Ուղիղ իմաստով չեն ասում, բայց, կարծես թե, մերձավոր շրջապատը փորձում է տարածել այն տեսակետը, թե Արցախից Հայաստանը ձեռք է քաշելու: Արցախի հարցում այնքան հնարավորություն որ ունենք հիմա, երբեք չենք ունեցել: Հիմա հնարավորություն կա ապացուցելու, որ Արցախը չի կարող լինել Ադրբեջանի կազմում:

-Ահազանգել էիք Ձեր էջում, թե մեզ փորձում են համոզել, որ «միջազգային հանրությունը Արցախը համարում է Ադրբեջանի մաս»: Որտեղի՞ց են փչում այդ քամիները, ու ինչքանո՞վ է մեզ համար վնասակար նման հայտարարություններ անելը:

-Ամենայն հավանականությամբ, քամիները փչում են այն ուղղություններից, որտեղից որ հետաքրքրություն ունեն տեսնելու Արցախն Ադրբեջանի կազմում, եւ դա տարբեր ուղղություններից է գալիս: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ Արեւմուտքում տարբեր գաղափարախոսություններ, կուսակցություններ եւ ծախված քաղաքական գործիչներ կան: Սա նշանակում է մի բան. հայությունը պետք է կարողանա աշխատել այն ուժերի հետ, որոնք կկարողանան հայանպաստ գաղափարներ բերել:

-Միջանցքը բացելու համար ի՞նչ ելք եք տեսնում Դուք:

-Միջանցքի բացման հետ կապված շատերի վերաբերմունքը հեգնական է, այդ թվում՝ միջազգային կառույցների: Շատերը վերապահումով են մոտենում, բայց կա միջազգային գործիքակազմ, եւ դրանք աղյուս-աղյուս հավաքելով՝ մենք կարող ենք ստանալ արդյունք: Դա երկարատեւ ճանապարհ է, բայց արդյունավետ. պետք է օգտագործել այդ ճանապարհը:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ՎՈԼԳՈԳՐԱԴ ԵՆ ՄԵԿՆԵԼ

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության երեք պատգամավորներ Ռուսաստանի Դաշնության Վոլգոգրադ քաղաք են մեկնել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՔՊ-ականներ Վահե Ղալումյանը, Ալեքսեյ Սանդիկովն ու Մաթեւոս Ասատրյանը Վոլգոգրադում մասնակցում են Ստալինգրադի ճակատամարտի 80-ամյակին նվիրված միջոցառումներին: Պատգամավորների հնգօրյա գործուղման (հունվարի 30-ից փետրվարի 3-ը) բոլոր ծախսերը հրավիրող կողմն է հոգում: Ի դեպ, այս օրերին Վոլգոգրադի ճանապարհային ուղեկալները, ի պատիվ Ստալինգրադի ճակատամարտի 80-ամյակի, Ստալինգրադ անվանումով են փոխարինվել: Վոլգոգրադը տարին մի քանի անգամ՝ այս օրերին, մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, Ստալինգրադ է անվանափոխվում: Հավելենք նաեւ, որ Ռուսաստանի օրենսդիր մարմինը քաղաքն անվանափոխելու օրինագիծ էլ էր շրջանառել, ինչը, սակայն, վերջնական հաստատման դեռեւս չի հասել:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՄԱՆ Է ԲԱՂԴԱԴԻ ՇՈՒԿԱՅԻՆ

«Հայաստանի իշխանությունները ձեռքները լվացել են Արցախի խնդրից: Որեւէ մեկը չփորձի մեզ վրա ծախել, որ իրենք ելույթներում Լաչինի հարց են շոշափում, հեռախոսազրույցներում այդ թեման են քննարկում. բա դա էլ չանե՞ն. դա ընդամենը «գալչկան» է: Իրենք են ստորագրել նոյեմբերի 9-ի փաստաթղթի տակ, իրենք պետք է պահանջատեր լինեն ողջ գործիքակազմով՝ խնդրի լուծման համար»,- Ar2Lur.a2-ի հետ զրույցում նման դիտարկում է արել ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը՝ անդրադառնալով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին: Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական սահմանին ԵՄ դիտորդական նոր առաքելության տեղակայման որոշմանը, Արմեն Աշոտյանը նշում է՝ կողմ է ցանկացած գործիքակազմի, որն ամրացնելու է երկրի անվտանգությունը: «Բայց կբացատրե՞ք՝ ԵՄ այս առաքելությունը ինչպես է ուժեղացնելու Հայաստանի ու Արցախի անվտանգությունը:

ԵՄ-ն ունի գործիքակազմ՝ իրենց ընկալմամբ ագրեսորին պատժելու համար, ինչպես Ռուսաստանին են անում, բայց, իրենց կարծիքով, Ադրբեջանը ագրեսոր չէ՞: Այս պայմաններում, երբ եվրոպական իշխանություններն արձանագրում են Ադրբեջանի ագրեսիան Հայաստանի սուվերեն տարածքի վրա, բա ո՞ւր են սանկցիաները»,-ասում է զրուցակիցը: Արմեն Աշոտյանի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանն Արցախն ու Հայաստանը աշխարհաքաղաքական «բազառի» է վերածել. «Մեր երկիրը ոնց որ Բաղդադի շուկան լինի. ով ինչ ունի աշխարհաքաղաքական իմաստով առնում, ծախում է, մեզ մեր տարածքի վրա առնում ու ծախում են: Նիկոլ Փաշինյանը խորացնում է հոգեբանաքաղաքական ծանր վիճակը»,-ասում է նա:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՐՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում մի շարք փոփոխություններ եւ լրացումներ են կատարվելու: Օրինակ՝ դիակից օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելու թույլտվության պահանջները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ 400 հազար դրամից 1 մլն դրամի չափով, դեղատներում սպառողին վաճառված պատշաճ որակի դեղերը փոխարինելը եւ հետ վերցնելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ 20.000 դրամից 30.000 դրամի չափով: Նշենք, որ գործատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետում աշխատանքի վայրում տեղի ունեցած դժբախտ դեպքի առնչությամբ ծառայողական քննություն չիրականացնելու կամ դժբախտ դեպքը չհաշվառելու դեպքում տուգանքի չափը կկազմի 50 հազար դրամից մինչեւ 130 հազար դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՎԻՎ օրենսգրքում այս լրացումները կատարելու վերաբերյալ առաջարկի հեղինակը վարչապետի աշխատակազմն է: Բանն այն է, որ առողջապահության բնագավառում «Հոգեբուժական օգնության մասին», «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին», «Մարդու արյան եւ դրա բաղադրամասերի դոնորության եւ փոխներարկումային բժշկական օգնության մասին», «Գովազդի մասին», «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին», «Մարդուն օրգաններ եւ հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքներով նախատեսված են պահանջներ, որոնք խախտելու համար օրենսգրքում նախատեսված չեն պատասխանատվության միջոցներ:

ՊԱՏՐՈՆ ԴԱՎՈՅԻ ԳՈՐԾԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գործարար Դավիթ Գալստյանին՝ Պատրոն Դավոյին կալանավորելու ու նրա գործողությունների մասով ԱԱԾ բացահայտումների շղթան, չի բացառվում, հասնի մինչեւ ՊՆ գեներալների: Տեղեկացանք, որ նախաքննական մարմինն այս օրերին ստուգում է ՊՆ պաշտոնյաների ներգրավվածությունը: Գրել էինք, որ Դավիթ Գալստյանը կալանավորվելու է, քանի որ ԱԱԾ-Ն բացահայտումներ է արել նրա ՍՊԸ-ի կողմից միլիարդների չարաշահումների մասով:

Նշենք, որ 2022 թվականի հունիսի 17-ին ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործի նախաքննության ընթացքում իրականացված քննչական եւ դատավարական գործողությունների արդյունքում ձերբակալվել է ՀՀ զինված ուժերի հրթիռային զորքերի եւ հրետանու նախկին պետ-վարչության պետ, գեներալ-մայոր Արմեն Հարությունյանը: Ըստ ԱԱԾ հաղորդագրության՝ ՀՀ զինված ուժերի հրթիռային զորքերի եւ հրետանու նախկին պետ-վարչության պետ, գեներալ-մայոր Արմեն Հարությունյանը 523.089.000 ՀՀ դրամին համարժեք 1.083.000 ԱՄՆ դոլարի անորակ հրթիռներ ձեռք բերելու պայմանագիր է կնքել, ինչը պետության համար առաջացրել է նյութական ծանր հետեւանքներ:

ԹԵԿՆԱԾՈՒ ՉՈՒՆԵՆ

ՄԻՊ թեկնածու առաջադրելու համար օրենքով սահմանված ժամկետն այս շաբաթ լրանում է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Մարդու իրավունքների պաշտպան առաջադրելու որոշում չունեն ո՛չ ընդդիմադիրները, ո՛չ էլ իշխանությունները: Տեղեկացանք, որ իշխող խմբակցությունն էլ թեեւ հաճախակի քննարկումներ է անցկացնում ՄԻՊ թեկնածուների մասով, սակայն դեռ չունի ՄԻՊ թեկնածու, որը կլինի պրոֆեսիոնալ, հանրության կողմից վստահություն վայելող կերպար: Տեղեկացանք, որ երեկվա փակ քննարկմանը նույնպես անդրադարձ է եղել ՄԻՊ-ի հարցին, բայց թեկնածուի շուրջ համաձայնության չեն եկել իշխանական պատգամավորները:

Ըստ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի՝ թեկնածուները կարող են առաջադրվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

ՄԻՊ առաջադրելու իրավունք ունեն ԱԺ բոլոր խմբակցությունները, իսկ նրան ընտրելու համար խորհրդարանում անհրաժեշտ է 65 ձայն. ստացվում է՝ ՀՀ նոր ՄԻՊ ընտրելու համար բավարար կլինեն միայն ՔՊ-ի ձայները:

ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԸ ՉԵՆ ՍՏՈՒԳՎՈՒՄ

Բնապահպանական եւ ընդերքի տեսչական մարմինը շուրջ մեկ տարի է՝ մատնված է անգործության: Ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ներկայանում է աշխատանքի, նստում համակարգչի առջեւ, ծանոթանում նորություններին, սրճում եւ հեռանում կամ լավագույն դեպքում ցուցանիշ ապահովելու համար իմիտացիա է անում: Այդ կառույցի լիազորությունների մեջ է մտնում ընդերքի վերահսկողությունը, բայց հանքարդյունաբերության ոլորտն ուսումնասիրող եւ զննող մասնագետ չկա վերահսկողական այդ կառույցում: Տեսչական մարմնի կանոնադրության մեջ ամրագրված է ընդերքօգտագործում եւ ընդերքի պահպանություն իրականացնելը որպես գլխավոր գործառույթ: Գործառույթներում նշված է նաեւ. «Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով, իրականացնում է վերահսկողական եւ (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության եւ ընդերքի ոլորտներում»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ բոլոր մասնագետները վերջին մեկ տարում կամ հեռացել են, կամ տարբեր հանգամանքներում հեռացվել են աշխատանքից: Այսօրվա դրությամբ տեսչական մարմինը փաստացի պարապուրդի է մատնված, եւ արդեն մեկ տարի է՝ Հայաստանում ոչ մի հանքավայրի գործունեություն չի ստուգվում: Տեսչական մարմնի երկու կարեւորագույն բաժիններում (Ընդերքի վերահսկողության վարչություն եւ Հանքային ջրերի եւ երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողության բաժին) մասնագետներ չկան, իսկ եղած 1-2 աշխատակիցներն էլ մանկավարժ են կամ «ֆիզկուլտուրնիկ», որոնք հանքի եւ հողի շերտերի մասնագիտական գիտելիքներ չունեն: Սա ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի բացն է. նա է համակարգում տեսչական մարմինների գործառույթը, զբաղվում կադրային հարցերով: Նկատենք՝Նիկոլ Փաշինյանը երկու տարի առաջ նշում էր. «Ուզենք, թե չուզենք, հանքարդյունաբերությունը շատ էական դեր է խաղում Հայաստանի տնտեսության համար, այդ թվում՝ անվտանգային համատեքստում»: Այս ոլորտը ստուգող մասնագետներ, սակայն, չկան պետական տեսչական մարմնում: Հիշեցնենք, որ վերջին աղմկահարույց ստուգումը եղավ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, որից հետո Վահե Հակոբյանն իր մասնաբաժինը կորցրեց այնտեղ, հետո էլ ստիպված եղավ պատգամավորական մանդատից հրաժարվել:

ԻՐԱՆԻ ԴԵՄ

ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ ՓՆՏՐՈՒՄ ԵՆ

«Ներկա պահին Իրանում իրավիճակը շատ հանգիստ է, մարդիկ աղրում են հանգիստ կյանքով»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց միջազգային իրանցի լրագրող եւ քաղաքագետ Խայալ Մուազին:

«Իրանի արտաքին գործերի նախարարության վրա հարձակման հիմնական պատճառն Իրանի ժողովրդի շրջանում վախի մթնոլորտ տարածելն ու պետական հեղաշրջում երկրում իրականացնելն էր: Իրանի ժողովուրդը միշտ աչալուրջ է եւ թշնամու այդպիսի խաղերին չի տրվում: Թշնամին դեռ հույս ունի, որ այդ հնացած խաղերը կարող են Իրանի դեպքում աշխատել»,- նշեց նա:

Քաղաքագետի խոսքով՝ Ամերիկան եւ Իսրայելը նոր կողմնակիցներ են փնտրում, որպեսզի նրանց հետ միասին պատերազմ սկսեն Իրանի դեմ: «Նրանք անում են ամեն հնարավորը, որպեսզի սկսեն այդ պատերազմը: Թուրքիան դեռ իր տեսակետն ամբողջովին չի հայտնել եւ չի բացել խաղաքարտերն Իրանի մասով, քանի որ նա հասկանում է աշխարհում Իրանի քաղաքական ուժը, ինչպես նաեւ Սիրիայում: Թուրքիան հասկանում է, որ եթե Իրանում որեւէ լուրջ բան տեղի ունենա, այն կարող է ազդել նաեւ հենց իր վրա: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա կարող եմ ասել, որ Իրանի եւ Ադրբեջանի միջեւ առկա են լարված հարաբերություններ: Ես չեմ կարծում, որ այդ ամենը երկար կտեւի, քանի որ Իրանի նոր քաղաքականությունն այն է, որ պետք է հիանալի հարաբերություններ ունենալ եւ պահպանել հարեւան երկրների հետ»,- հավելեց նա:

Իրանցի քաղաքագետը շարունակելով նշում է, որ ամերիկյան եւ սիոնիստական ուժերը շատ լավ հասկանում են, որ իրենց ծրագիրը դատապարտված է ձախողման: «Ես այստեղ ցանկանում եմ մեջբերել մեր հոգեւոր առաջնորդի խոսքերը՝ Ամերիկան դանդաղ հալվում է, եւ այդ պատճառով էլ թշնամին փորձում է քաոս ստեղծել երկրում եւ ամբողջ աշխարհում: Մեզ շատ իրադարձություններ են սպասվում»,- հավելեց նա:

Հիշեցնենք, որ Իրանի զինված ուժերի պաշտպանության նախարարությունը կիրակի օրը հաղորդել է Սպահան քաղաքում գերատեսչության արտադրական գործարաններից մեկի վրա անօդաչու թռչող սարքերի կողմից «անհաջող հարձակման» մասին:

Ըստ հաղորդագրության՝ հրթիռներից մեկը խոցվել է հակաօդային պաշտպանության համակարգով, եւս երկուսը հայտնվել են պաշտպանական թակարդների մեջ եւ պայթել:

Սպահան քաղաքում՝ Իրանի պաշտպանության նախարարության արտադրական համալիրներից մեկի վրա անօդաչու թռչող սարքի հարձակման հետեւանքով վնասվել է արտադրամասի տանիքը. ասվում է հաղորդագրության մեջ: Նշվում է, որ հարձակումը մարդկային զոհերի եւ տեխնիկայի խափանման չի հանգեցրել: Սպահանը գտնվում է մայրաքաղաք Թեհրանից մոտ 350 կիլոմետր դեպի հարավ, այստեղ են տեղակայված մի շարք ռազմավարական նշակության, այդ թվում՝ միջուկային ծրագրի կառույցները: Իրանական աղբյուրների տվյալներով՝ հարձակման ենթարկված գործարանը գտնվում է բալիստիկ հրթիռների արտադրությամբ հայտնի Իրանի ավիատիզերական կենտրոնի հարեւանությամբ:

Իրանի արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը հարձակումը որակել է «վախկոտ» քայլ՝ պնդելով, որ այդ հարվածները Թեհրանին ետ չեն պահի «խաղաղ միջուկային ծրագրի» աշխատանքներից:

Հարվածի համար որեւէ մեկը մինչ այս պահը պատասխանատվություն չի ստանձնել:

Միացյալ Նահանգների պաշտպանության նախարարության խոսնակ Պատրիկ Ռայդերը հայտարարել է, որ ամերիկյան կողմն այդ հարձակման հետ որեւէ կապ չունի:

Նախկինում իրանական ռազմավարական կառույցներին ճշգրիտ հարվածներ հասցրած Իսրայելը հարձակումների փաստն առայժմ չի մեկնաբանել: The Wall Street Journal-ը, սակայն, վկայակոչելով ԱՄՆ վարչակազմի իր աղբյուրները, գրում է, որ հարձակման ետեւում Իսրայելն է կանգնած:

Jerusalem Post-ը, հղում անելով Իսրայելի եւ արեւմտյան երկրների հետախուզության իր աղբյուրներին, պնդում է, որ Սպահանում հասցված հարվածների վնասը շատ ավելի մեծ է, քան Թեհրանն է ներկայացնում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն ընդունել է ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանին: Հանդիպման ընթացքում ռեկտորը նախագահին է ներկայացրել համալսարանում իրականացվող կրթական եւ ակադեմիական բարեփոխումներն ու ծրագրերը, ինչպես նաեւ անդրադարձել է կրթական գործընթացի կազմակերպման որոշակի հիմնախնդիրներին եւ դրանց լուծմանն ուղղված միջոցառումներին:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը, կարեւորելով որակյալ կրթության ապահովումը, ընդգծել է իր պատրաստակամությունը հնարավորինս աջակցել մայր ԲՈՒՀ-ում իրականացվող ծրագրերին եւ գիտակրթական միջավայրի բարելավմանն ուղղված քայլերին:

Երկուստեք անդրադարձ է կատարվել ԵՊՀ ինչպես շենքային պայմաններին, այդ թվում՝ ուսանողների համար նախատեսված հանրակացարանների անհրաժեշտությանը, այնպես էլ ուսումնական գործընթացի վրա ազդեցություն ունեցող բովանդակային բաղադրիչներին:

ՕՊԵՐԱՏԻՎ ՇՏԱԲԻ ՆԻՍՏ

Արցախի Հանրապետության պետական նախարար, օպերատիվ շտաբի պետ Ռուբեն Վարդանյանի ղեկավարությամբ երեկ տեղի ունեցած շտաբի նիստում քննարկվել են Ադրբեջանի կողմից Արցախի շարունակվող շրջափակման պայմաններում բնակչության կենսագործունեության ապահովմանը վերաբերող մի շարք հարցեր:

Ներկայացվել է պարենային ապրանքների, բենզինի եւ դիզվառելիքի շուկաներում, ենթակառուցվածքների ոլորտում ընթացիկ իրավիճակը: Ջեկուցվել է, որ կտրոնային համակարգի ներդրումը որոշակի չափով մեղմել է պարենային խնդիրը, սակայն շրջափակման հետեւանքով բնակչությունը շարունակում է զրկված մնալ մի շարք կարեւոր ապրանքատեսակներ ձեռք բերելու հնարավորությունից:

Հաշվի առնելով, որ օպերատիվ շտաբի անդամներն արդեն ավարտել են համայնքներում բնակչության հետ հերթական հանդիպումների շարքը՝ պետնախարարը պատասխանատուներին հանձնարարել է ամփոփել բարձրացված հարցերը եւ դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ ներկայացնել:

ԿՈՉ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

2022թ. դեկտեմբերի սկզբից Եվրոպական Միությունն ուշադիր հետեւում է Լաչինի միջանցքի երկայնքով եւ դրա շուրջ տեղի ունեցող իրադարձություններին եւ դրանց մարդասիրական հետեւանքներին: ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախագահ Ժոզեպ Բորելը մշտական կապի մեջ է երկու կողմերի արտաքին գործերի նախարարների հետ: Կողմերի հետ սերտ կապի մեջ է նաեւ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը:

«ԵՄ-ն Ադրբեջանին կոչ է արել իր իրավասության սահմաններում միջոցներ ձեռնարկել միջանցքով տեղաշարժվելու ազատությունն ու անվտանգությունն ապահովելու համար՝ համաձայն 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից բխող իր պարտավորությունների»,- նշված է փաստաթղթում:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԵՊՔ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ռազմական հակահետախուզության ղեկարտամենտի ծառայողների մշակած եւ ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացի, ՊՆ N զորամասի կոչումով կապիտան սպան 2021 թվականի սկզբից հայտնվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում եւ հավաքագրվել նրանց կողմից:

Ծառայության նշանակվելով ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասում՝ որպես զորամասի ծառայություններից մեկի պետ, ծառայության ընթացքում օտարերկրյա հատուկ ծառայություններից հաղորդագրությունների միջոցով ստանալով համագործակցությունը շարունակելու վերաբերյալ առաջարկություն եւ ընդունելով այն, պարտավորվել է վարձատրության դիմաց հավաքել եւ օտարերկրյա հատուկ ծառայություններին հանձնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար ռազմական բնագավառի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, որպիսի պայմաններում իր հանցավոր գործունեությունն իրագործելով՝ 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում հավաքել եւ իր կողմից օգտագործվող տարբեր բջջային հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչին է հանձնել պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող ռազմական բնագավառի տեղեկություններ, մասնավորապես՝ իրենց ստորաբաժանման պահպանության ներքո գտնվող սպառազինության, զինատեսակների, քանակի, մարտական դիրքի տեղակայման վայրի վերաբերյալ տեղեկություններ եւ այլ տվյալներ, լուսանկարներով ցուցադրել է սպառազինությունը եւ զինատեսակների քանակը, այդ թվում՝ Հնդկաստանից ձեռք բերված ռազմական տեխնիկայի վերաբերյալ, որոնց դիմաց, որպես վարձատրություն, օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչից 2 անգամ տարբեր օրերի ընթացքում ստացել է գումար եւ բջջային հեռախոս՝ այդկերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության:

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվել են խուզարկություններ, հիշյալ սպային ներկայացվել է մեղադրանք, դատարանի որոշմամբ՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը: Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը կրկին հորդորում է ՀՀ բոլոր քաղաքացիներին, այդ թվում՝ զինծառայողներին, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված լինելու կամ համագործակցության առաջարկ ստանալու մասին անհապաղ տեղեկացնել իրավասու մարմիններին ՀՀ անվտանգությանն ու պաշտպանությանը վերաբերող հարցերը նրանց հետ քննարկելը եւ տեղեկությունների փոխանցումը բացառելու, ինչպես նաեւ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԼՈՒՐԵՐ

ԿԱ ԵՐԵՔ ԴԻ

Հունվարի 31-ին՝ ժամը 00:12-ին, Գեղարքունիքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Սեւան-Գագարին ավտոճանապարհին՝ գազալցակայանի մոտակայքում, տեղի է ունեցել ՃՏՊ՝ հրդեհի բռնկմամբ: Պարզվել է, որ Իջեւան-Երեւան ավտոճանապարհի 95-րդ կմ-ին Mercedes-Benz C-Class մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից, հայտնվել դաշտամիջյան հատվածում եւ բռնկվել: Հրդեհը մեկուսացվել է ժամը 00:37-ին, մարվել՝ 00:52-ին: Ավտոմեքենան այրվել է:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը ուղեւորներ Թ. Ա.-ն (ծնված 1997 թ.) տեղափոխվել է Հրազդանի ԲԿ, այնուհետեւ՝ Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, իսկ Ն. Գ.-ն (ծնված 1997 թ.)՝ Սեւանի ԲԿ: Թ. Ա.-ի առողջական վիճակը գնահատվել է միջին ծանրության, Ն. Գ.-ինը՝ ծանր կայուն: Փրկարարներն ավտոմեքենայից մոտ 10 մ հեռավորության վրա հայտնաբերել են վարորդ Գ. Բ.-ի (ծնված 2002 թ.), ուղեւորներ Թ. Բ.-ի (ծնված 1997 թ.), Ա. Ք.-ի (ծնված 1997 թ.) դիերը եւ մոտեցրել շտապօգնության ավտոմեքենային:

ԿԱՇԱՌՔԻ ԴԵՊՔԵՐ

ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունից ստացված նյութերի հիման վրա՝ Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ ոստիկանության առանձին պաշտոնատար անձանց կողմից կաշառք պահանջելու եւ ստանալու, պաշտոնեական դիրքը չարաշահելու, ինչպես նաեւ քաղաքացիների կողմից ոստիկանության պաշտոնատար անձանց կաշառք տալու առերեւույթ հանցագործությունների դեպքերի առթիվ:

Քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Ճանապարհային ոստիկանության տեսուչներ Կ. Հ.-ն, Կ. Մ.-ն եւ Ա. Ա.-ն՝ երթեւեկության կանոնների խախտումներ, իսկ որոշ դեպքերում անգամ կոպիտ խախտումներ թույլ տված՝ առանց ԱՊՊԱ պայմանագրի կամ վարորդական վկայականի երթեւեկող, նույնիսկ վարորդական իրավունքից զրկված բազմաթիվ վարորդների նկատմամբ արձանագրություններ չկազմելու դիմաց վերջիններից պահանջել եւ ստացել են մինչեւ 10000 ՀՀ դրամ կաշառք:

Բացի այդ, նախաքննությամբ տվյալներ են ստացվել նաեւ այն մասին, որ ոստիկանության հիշյալ պաշտոնատար անձինք, անձնական շահագրգռվածությունից ելնելով, չարաշահել են պաշտոնեական դիրքը եւ խախտումներ թույլ տված վարորդների նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ չեն կազմել: 30.01.2023 թ.-ին ՃՈ տեսուչներ Կ. Հ.-ն, Կ. Մ.-ն եւ Ա. Ա.-ն կաշառք պահանջելու եւ ստանալու կասկածանքով ձերբակալվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի կողմից: Կատարվում է նախաքննություն: Ձեռնարկվում են անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ինչպես նաեւ իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ առերեւույթ հանցագործությունների, ինչպես նաեւ դրանք կատարած անձանց ամբողջ շրջանակը պարզելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԾԱՆՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Shamshyan.com-ը գրել էր, որ հունվարի 25-ին ողբերգական ավտովթար էր տեղի ունեցել Երեւանում. Ford Fusion-ը բախվել էր «Լյուքս» հյուրանոցի պատին. վարորդին ավտոմեքենայից դուրս էին բերել փրկարարները՝ օգտագործելով հատուկ տեխնիկա: Երիտասարդ վարորդը հիվանդանոցի ճանապարհին մահացել էր. վթարի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մահացած երիտասարդ տղան Հայկ Բլեյանն էր, որը ««ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» պետական ոչ առեւտրային կազմակերպության հիմնադիր տնօրեն Աշոտ Բլեյանի հորեղբոր թոռն է: Ողբերգական դեպքը ծանր այլ հետեւանքներ է ունեցել: ArmLur.am-ին հասած հավաստի տեղեկությունների համաձայն՝ երիտասարդ տղայի հայրը, չդիմանալով որդու կորստին, փորձել է ինքնասպան լինել, սակայն հարազատները կանխել են նրա գործողությունները, որից մի քանի օր անց վթարից մահացած տղայի հայրը՝ Ա. Բլեյանը, հանկարծամահ է եղել: Տեղեկությունը փորձեցինք պարզել ՀՀ քննչական կոմիտեից, որտեղից ի պատասխան՝ հայտնեցին. «Ստացվել է նշված անձի հանկարծամահության վերաբերյալ հաղորդում, դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, մնացած հանգամանքները կպարզվեն սկսված նախաքննության ընթացքում»:

ՉԻ ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ փրկարար ծառայության գնդապետ Արսեն Սարոյանը հրավիրվել է ՀՀ քննչական կոմիտե եւ հարցաքննվել: Վերջինիս նախաքննական մարմինը հարցաքննության է հրավիրել՝ Հանրային հեռուստաընկերության եթերում հունվարի 19-ին զորամասի կացարանում տեղի ունեցած հրդեհի մասով արած հայտարարությունների հետ կապված: Իսկ ի՞նչ էր ասել փրկարար ծառայության գնդապետ Արսեն Սարոյանը: Արսեն Սարոյանը հստակ նշեց.«Ներսում եղել է 21 հոգի, նրանցից 14-ը հայտնաբերվել են մահճակալներին պառկած: Մինչեւ փրկարարների հասնելը 6 հոգի դուրս է եկել այրվող շինությունից, նրանցից երեքը տեղափոխվել են հիվանդանոց: Ենթադրում եմ, որ զոհված 15 զինծառայողներից 14-ը ծխահարվել են, նույնիսկ չեն հասցրել վեր կենալ»: Այս հայտարարությունից հետո նախաքննական մարմնում խառնվել են իրար, քանի որ նրանք ընդամենը զինվորներից մեկին են գտել մահճակալի վրա, իսկ մյուսները սենյակի տարբեր մասերում են եղել՝ պատուհանի մոտ, գետնին եւ այլ վայրերում: Այս եւ այլ հայտարարությունների հակասության մասով են գնդապետին հրավիրել հարցաքննության, եւ ուշագրավն այն է, որ, մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն, նա Հանրային հեռուստաընկերության եթերում արած հայտարարությունները չի պնդել նախաքննական մարմնում, ինչը ենթադրել է տալիս, որ նա չի հաստատել եթերում ասված իր խոսքերը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 30-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ 13 ԱՇԱԿԵՐՏ

Աճարկուտը Իջեւան խոշոր համայնքի գյուղերից է: Այն Տավուշի մարզկենտրոն Իջեւան քաղաքից գտնվում է 16 կմ հյուսիս-արեւմուտք: Գեղատեսիլ բնակավայրը գտնվում է անտառի եզրին, Քարահան գետի ափին: Աճարկուտը որպես բնակավայր հիմնվել է1930 թվականին, նախկին անվանումներն են՝ Սեւքարի անտառնտեսությանը կից ավան, Սեւքարի փայտամշակման գործարանին կից ավան: Գյուղն Աճարկուտ է կոչվում 1967 թվականից: Այժմ Աճարկուտ բնակավայրն ունի շուրջ 200 բնակիչ: Մեկհարկանի, ոչ բարվոք գտնվող շենքում գործում է Աճակուտի հիմնական դպրոցը: Դպրոցի տնօրեն Արտակ Վարդումյանը հայտնեց, որ այդ կրթօջախ հաճախում են 1-8 դասարանների ընդհանուր թվով 13 աշակերտ: Մոտ 10 տարի այդ դպրոցի աշակերտների թիվն ավելի քիչ էր՝ 10: Դպրոցում աշխատում է 8 ուսուցիչ, դպրոցի աշխատողների ընդհանուր քանակը 14 է: Աճարկուտում հիմնական դպրոցն ավարտածները 9-12-րդ դասարանների ուսումնառությունն անցնում են Իջեւան խոշոր համայնքի այլ գյուղերի՝Ներքին Ծաղկավանի եւ Սարիգյուղի միջնակարգ դպրոցներում

ԳՈՒՄԱՐ ՉԵՆ ՀԱՏԿԱՑՆՈՒՄ

Դիլիջան քաղաքի կենտրոնում՝ հանրահայտ «Միմինո արձանախմբից ոչ հեռու, հոսում է Աղստեւ գետը: Գետի հունը նման է մերձարեւադարձային ջունգլիի, այնտեղ մեծ ծառեր ու թփեր են աճում: Գետի հունում վաղուց գտնվում է մետաղյա մեծ խողովակ: Դիլիջանի բնակիչները հայտնում են, որ տարիներ առաջ գետի հուն էին թափում Դիլիջան քաղաքում տեղակայված զորամասի աղբը: Աղստեւ գետի հոսանքը, հանդիպելով մեծ թփերի, ծառերի, շեղել է իր ուղին եւ տեղ-տեղ վնասել է գետի ափերը երիզող, պաշտպանող մեծ պատը: Դիլիջան համայնքի 2023 թվականի բյուջեն մեկ միլիարդ 187 միլիոն 137 հազար 500 դրամ է: Դիլիջանի համայնքապետարանն այդ մեծ գումարից մի քանի միլիոն դրամ գումար չի հատկացնում զբոսաշրջային քաղաքի կենտրոնում Աղստեւի հունը մեծ ծառերից, թփերից եւ տարատեսակ աղբից մաքրելու նպատակով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄ

2022թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձեւավորել է Իջեւան քաղաքում գործող թիվ 38 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նոր կազմ: Հին կազմի նախագահ Աիդա Սարգսյանը դարձել է հանձնաժողովի նոր կազմի անդամ: Թիվ 38 ԸԸՀ նախագահ է ընտրվել Յուրա Բազինյանը, որը Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի օգնականն է: Յուրա Բազինյանը 2008-2015 թվականներին աշխատել է «Հայէկոնոմբանկ»-ի Իջեւանի մասնաճյուղում՝ որպես ոսկերիչ փորձագետ, 2016-2022 թվականներն աշխատել է «Կոնվերս բանկ»-ի Իջեւանի մասնաճյուղում՝ որպես փորձագետ-գնահատող, 2022թ. օգոստոսի 8-ին նշանակվել է Տավուշի մարզպետի օգնական: Թիվ 38 ԸԸՀ նախագահի տեղակալ է նշանակվել Արման Գեւորգյանը, որը Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարն է: Թիվ 38 ԸԸՀ-ի նոր կազմը գործելու է 6 տարի ժամկետով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՄ ՀԱՆԴԵՊ ԲԱՐԴՈՒՅԹ ՈՒՆԻ

«Նիկոլ Փաշինյանն իմ հանդեպ շատ լուրջ բարդույթ ունի. նա միայն կիսակայացած քաղաքական ուժերի հետ է հանդիպում». Պարույր Հայրիկյան



-Պարոն Հայրիկյան, Ադրբեջանը հրաժարվում է բանակցել Լաչինի միջանցքի մասով, ավելին՝ գնալով կոշտացնում է իր հռետորաբանությունը, Հայաստանի իշխանություններն էլ ասում են, թե Լաչինը Ռուսաստանի պատասխանատվության գոտին է, իրենք պետք է հարցը լուծեն: Այս խճճված ու բարդ իրավիճակում ինչպե՞ս եք խնդրի լուծումը տեսնում, որքա՞ն կդիմանա շրջափակված Արցախը.

-Անկախ նրանից, թե որքան խճճված է իրավիճակը, հակամարտության պայմաններում խնդրի լուծումը հարցի միջազգայնացումն է, այդ ուղղությամբ պետք է իշխանությունները գործեն: Մի արմատական սխալ կա, որին ոչ մեկը չի ուզում անդրադառնալ, եւ այս ամենը դրա հետեւանք է: Ընդհանրապես, բանակը եւ զինվորը նրա համար են, որ երբ պետությանը վտանգ է սպառնում, իր վրա վերցնեն առաջին հարվածը, նույնիսկ գնան մինչեւ վերջ՝ ինքնազոհաբերման, բայց մեզ մոտ բանակը զոհաբերվեց իբրեւ զինվորների անվտանգության համար, այն էլ՝ այն զինվորների, որոնք, զենքը ձեռքներին, կանգնած էին, շրջափակման մեջ չէին: Այստեղից սկսվեց ամեն բան, խախտվեց մարդկության համար բնականոն գործելակերպը: Արցախը դեռ երկար կարող է դիմանալ, բայց արդյոք 21-րդ դարում սա՞ է բնականոն ապրելու ձեւը: Մերոնք կիսատպռատ են աշխատում Լաչինի մասով, եւ ամենակարեւորը՝ եթե դու օրինականացնում ես ուժի սպառնալիքով ստորագրած փաստաթուղթը՝ նոյեմբերի 9-ի համաձայնագիրը, բնականաբար, դու նաեւ աշխարհին ես մատուցում դա որպես ճշմարտություն, այնինչ շատ լուրջ փաստարկման հնարավորություն կար աշխարհին ցույց տալու, որ ամեն ինչ տեղի է ունեցել ՄԱԿ-ի կանոնադրության խախտմամբ, Մինսկի խմբի պայմանավորվածությունների, Հելսինկյան համաձայնագրերի խախտմամբ: Մենք պետք է պայմանավորվածություններով համաձայնության գայինք. դա էր աշխարհի պահանջը, բայց տեղի ունեցավ այլ բան:

-Հայաստանի իշխանությունների ձեռնարկած քաղաքականությունը Արցախի մասով ինչպե՞ս եք գնահատում, ի՞նչ գործիքակազմ ունի հայկական կողմը միջազգային հարթակում, որը չի կիրառում:

-Շատ հաճախ դա կախված է նաեւ նրանից, թե հարցն ով է բարձրացնում, ինչպես է բարձրացնում, այսինքն՝ անհատներից է կախված, բայց, ընդհանուր առմամբ, որեւէ գործողություն պետք է գնահատես նաեւ դրա արդյունքներով, իսկ մենք արդյունք չունենք: Նա, ով կասի՝ գոհ է, իրեն բավարարում է իշխանությունների կեցվածքը, ծիծաղելի վիճակում կհայտնվի:

-Պարոն Հայրիկյան, իսկ այս ընթացքում փորձե՞լ եք հանդիպել Փաշինյանի հետ, նրա հետ իրավիճակը քննարկել:

-Նիկոլ Փաշինյանն իմ հանդեպ շատ լուրջ բարդույթ ունի, ես էլ այդ բարդույթը հաղթահարելու ճիգեր չեմ ձեռնարկում, որովհետեւ ապրում եմ ճշմարտությամբ: Փաշինյանի բարդույթը գալիս է նրանից, որ մի քանի անգամ իրեն լուրջ ներկայացվել է իր անազնիվ դրսեւորումները, ձախողումները: Ցավոք սրտի, մեր հանրությունը չի հասկանում, որ ամեն ինչ, նաեւ իշխանությունների նկատմամբ հանրության վերահսկողությունը սկսվում է Սահմանադրությունից: Նիկոլ Փաշինյանը, օրինակ, մի քանի օր առաջ նորից ձախողեց, որովհետեւ ինքը ժամկետներ էր նշում, որ պետք է այս ժամանակահատվածում Սահմանադրության կարգավորումներ անի, բայց չի անում, ժամկետներն էլ լրանում են: Սա արդեն երրորդ անգամն է, որ տապալվում է նա, իսկ իշխանավորի համար մի անգամն էլ բավարար է, որ Սահմանադրության հարցում ձախողելուց հետո ասի՝ ես չկարողացա:

-Այսինքն՝ Փաշինյանը հայտարարություններ է անում, խոստումներ է տալիս ու այդպես էլ դրանք չի՞ կատարում:

-Խոստումն այլ բան է, կարող ես մի բան խոստանալ, չստացվի, բայց երբ դու կառավարության ծրագրում բան ես արձանագրում եւ կառավարության մակարդակով որոշում ես ընդունում, ու դա հիմնական օրենքի մասին է, ապա դա չանելը հավասարազոր է պետությունը տապալելուն: Հիմնական օրենքով է պետությունն ապրում. եթե հիմնական օրենքով չի ապրում, կամ պետք է ունենա ավանդույթներ, կամ էլ պետք է ընդունի, որ ինքը չկա: Այս կարեւորագույն հարցում տապալվածից որեւէ բան ակնկալելն ուղղակի ողջամիտ չէ: Փաշինյանը քննադատում է ՀԱՊԿ-ին, Ռուսաստանի քաղաքականությունը, բայց քայլեր չի ձեռնարկում. դու քննադատելու համար չես, գործադիր իշխանության ղեկավարն ես, բայց քայլ չես ձեռնարկում, դու քննադատելու համար չես, այլ գործ անելու համար ես:

-Կոնկրետ քայլ ասելով՝ ի՞նչ նկատի ունեք, արդյոք մ՞յն, որ Հայաստանը պետք է դուրս գա ՀԱՊԿ-ից:

-Ոչ թե պետք է դուրս գա, այլ պետք է արձանագրի, որ ՀԱՊԿ-ը չի գործում, չի կատարում իր պարտավորությունները, հետեւաբար՝ ՀԱՊԿ չկա: Որեւէ առողջ մարդ, երբ բժիշկը վատն է, ասում է՝էլ չեմ գնա այդ բժշկի մոտ: Հիմա նույն տրամաբանությամբ կամ պետք է քննադատես ու ակնկալես դրանից արդյունքներ, կամ հստակ արձանագրումներն անես: Մեկ օրվա մեջ չի արվում դա, վաղուց պետք է աշխատանքներ տարվեին: Արդեն լրանում է 50 տարին, որ ռազմավարական ծրագիր եմ մեր ժողովրդին նվիրել՝ «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով». անկախություն ումի՞ց՝ իմպերիալիստական Ռուսաստանից: Ես իմ դիրքորոշումը չեմ փոխել: Կա քաղաքակիրթ աշխարհ, եւ կան առանձին «իմպերիալիստիկներ». պետք է լինել քաղաքական աշխարհի հետ:

-Պարոն Հայրիկյան, պատերազմից հետո արտախորհրդարանական ուժերի նոր ֆորմատ է ձեւավորվել, որոնք կառավարությունում պարբերաբար հանդիպումներ են ունենում Նիկոլ Փաշինյանի հետ, իրավիճակն են քննարկում, տարբեր արձանագրումներ անում: Որպես արտախորհրդարանական քաղաքական ուժի ղեկավար՝ ինչպե՞ս եք վերաբերվում այս ֆորմատին, եւ ինչու՞ Ձեր կուսակցությունը չի մասնակցում այդ հանդիպումներին:

-Մենք հրավեր չենք ստացել: Օրինակ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ շատ հարցերում մենք ընդդիմադիր էինք, բայց հաճախ էինք հանդիպում՝ նույնիսկ մեր անհամաձայնությունը հայտնելու այս կամ այն բանի վերաբերյալ: Հրավեր չի եղել իր բարդույթի պատճառով: Հայ քաղաքական գործիչներից արցախյան հարցում ավելի շատ ընդգրկված մարդ, քան ԱԻՄ-ի ղեկավարությունն է, չի եղել: Այն վճռական պահին, երբ ինքը պետք է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարություն ստորագրեր, հրավիրում է կուսակցությունների, բայց ինձ չի հրավիրում, որովհետեւ ես մասնագիտական գնահատական կտայի, ես ամենավտանգավոր շրջանում պարետ եմ եղել 2 տարուց ավելի, ես կասեի, որ չի կարելի փաստաթուղթը ստորագրել, եւ կհիմնավորեի՝ ինչու: Փաշինյանը հիմա ընտրել է այն ճանապարհը, որ միայն կայացած կամ կիսակայացած քաղաքական ուժերի հետ է հանդիպում, բայց ազգային կյանքում ներդրում ունեցած ուժը եւ նրա ղեկավարը Փաշինյանին բարդույթավորում են:

ԿԱՐԾԻՔ. ԱՄՆ-Ն ԹԱՆԿ ԿՎՃԱՐԻ

«ԱՄՆ-ն Չինաստանի հետ պատերազմելու դեպքում բավականին թանկ գին կվճարի»,- «Հուանցյու շիբաո» օրաթերթի տեսաբան Յուան Սյաոցունն է գրում:

Տեսաբանի կարծիքով՝ ամերիկացի զինվորականների՝ ապագայում պատերազմ սկսելու հայտարարություններին որպես անհեթեթության չպետք է վերաբերվել. դրանք իրականում արտացոլում են Վաշինգտոնի իրական ցանկությունները, որ պատրաստվում են կյանքի կոչել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում: Նրա համոզմամբ՝ ԱՄՆ-ն, իսկապես, նախապատրաստում է իր բանակը Չինաստանի հետ ռազմական կոնֆլիկտ հրահրելու համար:

«Սպիտակ տունն ինչքան շատ ցանկանա ու Պեկինի հետ պատերազմ հրահրելու փորձեր անի, այնքան մենք պետք է ուժեղացնենք ազգային պաշտպանությունն ու պաշտպանենք հայրենիքը: ԱՄՆ-ն ինչքան շատ գլուխ տանի բարձր տեխնոլոգիաների ոլորտում վերերկրային առաջընթաց գրանցելու մասին, այքան մեծ է լինելու նրա՝ անկախանալու ցանկությունն ինովացիաների ու գիտահետազոտական ոլորտներում: Ինչեւէ, ռազմական ու գիտության ոլորտում ԱՄՆ գործողությունները՝ ուղղված Չինաստանի դեմ, նրան բավականին թանկ են արժենալու»,- նկատում է հոդվածագիր:

Նշենք, որ ավելի վաղ Ամերիկայի զինված ուժերի գեներալ Մայք Մինիհանն իր ենթակա զինվորականներին հորդորել էր 2025-ին պատրաստվել պատերազմել Չինաստանի դեմ:

Սրան էլ ավելացնենք այն փաստը, որ ԱՄՆ պետական քարտուղար Էնթոնի Բլինքենը տարեսկզբին՝ Ճապոնիա այցի ժամանակ, հայտարարել էր, թե Չինաստանն իրենց համար ոչ այդքան մեծ ստրատեգիական վտանգ է ներկայացնում:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 15 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 22-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Լմբատ-1 թաղամաս, 2 շենք, 7 հասցեում գտնվող 89,5 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8880000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.02.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 17.03.2023թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ ք., Գ. Լուսավորչի փողոց, 32 հասցեում գտնվող 235,6 ք.մ. բնակելի տուն, 6,8 ք.մ. թռչնանոց, 17,7 ք.մ. ծածկ, 2 ք.մ. /3,6 խ.մ./ պարիսպեւ 0,07272 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝35030000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 17.02.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 17.03.2023թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԿԱՏԱՐԻ ՊՐՈՌԵԿՏՈՐԸ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ընթացիկ կառավարման բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2023 թ. հունվարի 30-ի N 121-Ն որոշմամբ՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի կանոնադրության մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Ռեկտորի պաշտոնը թափուր մնալու կամ այլ պատճառով ռեկտորի լիազորությունները կատարելու անհնարինության դեպքերում ռեկտորի լիազորություններն ամբողջ ծավալով իրականացնելու վերաբերյալ համալսարանի հիմնադրի կողմից բուհի կանոնադրությամբ նախատեսվել են կարգավորումներ, ըստ որոնց՝ ռեկտորի լիազորությունները կիրականացնի բուհի պրոռեկտորը, իսկ մեկից ավելի պրոռեկտորների դեպքում՝ բուհում առավել երկար ստաժ ունեցողը: Պրոռեկտորի պաշտոնը թափուր մնալու կամ պրոռեկտորների բացակայության կամ այլ պատճառով լիազորությունները կատարելու անհնարինության դեպքում ռեկտորի պարտականություններն ամբողջ ծավալով իրականացնում է բուհի դեկաններից կամ դեկանի պարտականությունները կատարողներից մեկը, որն ունի բուհի պրոռեկտորի առավել երկար աշխատանքային ստաժ, իսկ բուհի պրոռեկտորի աշխատանքային ստաժի բացակայության դեպքում՝ բուհում առավել երկար աշխատանքային ստաժ ունեցող դեկաններից կամ դեկանի պարտականությունները կատարողներից մեկը:

Այս քայլն իրականացվել է՝ հաշվի առնելով իրավական ակտերում համապատասխան կարգավորումների բացակայությունը, ինչպես նաեւ բուհերի կառավարման արդյունավետությունը եւ հետագայում փակուղային իրավիճակներում չհայտնվելու հնարավոր ռիսկերը: Նմանօրինակ փոփոխություններ առաջիկայում նախատեսվում են նաեւ մյուս բոլոր պետական բուհերի կանոնադրություններում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ փոփոխության արդյունքում բուհը կշարունակի բնականոն գործունեությունը՝ իրականացնելով աշխատավարձերի եւ մնացած այլ վճարումների կատարումը՝ նախորդ տարվա հաստատված բյուջեի համամասնություններով՝ հաշվի առնելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները:

Նախաձեռնված քայլերի մասին պաշտոնական գրությամբ իրազեկվել է կանոնադրության ուժով բուհի ղեկավարի պարտականությունները կատարողը, ում առաջարկվել է Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հետ կնքել ֆինանսական միջոցների տրամադրման համապատասխան պայմանագիր:

Միաժամանակ նշենք, որ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում հոգաբարձուների խորհրդի ձեւավորման ուղղությամբ: Բուհի հոգաբարձուների խորհրդի ձեւավորման ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմից թեկնածուների առաջադրման եւ ընտրության ընթացքում կատարված ընթացակարգային խախտումների առնչությամբ ԿԳՄՍ նախարարությունը ստացել է բողոք, որն ուսումնասիրության փուլում է:

Ռեկտորի ընտրության արդյունքների հաստատումը պայմանավորված է լինելու դատարանի վարույթում գտնվող գործերի ընթացքից: Հիշեցնենք, որ 09.12.2022 թ. տեղի ունեցած «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության արդյունքները վիճարկվում են դատական կարգով. Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում ԵԴ/66629/02/22 քաղաքացիական գործը, կիրառվել է հայցի ապահովման միջոց:

ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹՆԵՐ՝ ԱՊՐԻԼԻ 29–ԻՑ

Սոֆիայի եւ Երեւանի միջեւ ուղիղ չվերթների մեկնարկը կտրվի ապրիլի 29-ից. հայտնել են Սոֆիայի օդանավակայանում: Տոմսերն արդեն վաճառվում են Wizz Air օպերատորի կողմից: Մինչեւ հունիսի կեսերը չվերթներ կիրականացվեն չորեքշաբթի եւ կիրակի օրերին, իսկ հունիսի 12-ից հետո՝ երեքշաբթի եւ շաբաթ օրերին:

Հաղորդվում է, որ Երեւանը Սոֆիայից դուրս եկող ուղղություններից մեկն է դարձել այն բանից հետո, երբ Wizz Air-ը 2022 թ. վերջին Սոֆիայի օդանավակայանում տեղակայեց յոթերորդ ինքնաթիռը: Սա ճանապարհ է հարթել դեպի նոր ուղղություններ, ինչպիսիք են Ստոկհոլմը, Համբուրգը եւ Ռիադը:

Սոֆիայի օդանավակայանում ընդգծել են թռիչքների ցանցի ընդլայնման կարեւորությունը՝նշելով, որ դրա շնորհիվ զարգացնում են ոչ միայն օդանավակայանը եւ ավիաընկերությունները, այլեւ դա տեղական բիզնեսին ուղղակիորեն օգնում է զարգանալ:

«ԱՄՈՒՆԴԻ–ԱԿԲԱ» ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

«Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթը» հունվարի 31-ին Հայաստանում կազմակերպում է «Ամունդի- Ակբա տնտեսական համաժողով 2023» խորագրով տնտեսական համաժողով:

Համաժողովը բաղկացած է երկու բաժնից՝ պրեզենտացիոն մասից, որի ընթացքում կներկայացվեն մակրոտնտեսական հեռանկարները, Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի»-ի ներդրումային ռազմավարությունն ու ՀՀ դրամավարկային քաղաքականության առանձնահատկությունները, եւ պանելային քննարկման մասից, որի շրջանակում կքննարկվեն կրիպտոարժույթները, բլոկչեյնը, ինչպես նաեւ բնապահպանական, սոցիալական եւ կառավարչական գործոնների (ESG) դերը երկրի զարգացման գործում:

Համաժողովին կմասնակցեն Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի»-ի ակտիվների ռազմավարական տեղաբաշխման եւ ֆիդուցիար կառավարման ղեկավար, պատվիրակված ներդրումային լուծումների պատասխանատու Ֆրեդերիկ Պասկալը, «Ամունդի» ինստիտուտի ներկայացուցիչ, ստրատեգ Տրիստան Պերիեն, ՀՀ կենտրոնական բանկի փոխնախագահ Արմեն Նուրբեկյանը, ոլորտային այլ փորձագետներ:

Տնտեսական համաժողովին հնարավոր կլինի հետեւել առցանց:

«Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ» ընկերությունը հիմնել են Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ ֆրանսիական «Ամունդի»-ն եւ «Ակբա» բանկը: «Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթը» վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

«ԵՐԲ ԱՐԵՎԵԼՔԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԱՐԵՎՄՈՒՏՔԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Իտալական Տրիեստե քաղաքում անցկացվել է ամենամյա «Երբ Արեւելքը հանդիպում է Արեւմուտքին» (WHEN EAST MEETS WEST) կինոարտադրության հարթակը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից 2023 թվականին պաշտոնական հրավերով՝ այդ հարթակին մասնակցել են հայ կինոգործիչները, այդ թվում՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանը, ֆիլմ-հանձնակատար Մելիքսեթ Կարապետյանը, միջազգային բաժնի ղեկավար Նաիրա Գեւորգյանը, ինչպես նաեւ վեց հայ կինոարտադրողներ:

WEMW-ի ամենամյա կինոհարթակը կազմակերպվել է Տրիեստեի 34-րդ միջազգային կինոփառատոնի օրերին (հունվարի 21-28-ը): Այս տարի WEMW-ի դիտակետում (Focus 2023) եղել են Հայաստանը, Վրաստանը, Մոլդովան, Ուկրաինան, Իսպանիան, Պորտուգալիան, Լատինական Ամերիկան եւ այլ երկրներ: WEMW-ը միավորում է շուրջ 40 երկրի ավելի քան 500 մասնագետի:

Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանը WEMW-ի շրջանակում հանդիպումներ է ունեցել Վրաստանի ազգային կինոկենտրոնի փոխտնօրենի, Մոնտենեգրոյի (Չեռնոգորիա) կինոկենտրոնի տնօրենի, Թեսալոնիկի միջազգային կինոփառատոնի համակարգողի, Վենետիկի միջազգային կինոփառատոնի ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի հետ: Քննարկվել են Հայ կինոյի 100-ամյակի եւ 2024 թվականին Ս. Փարաջանովի 100-ամյակին նվիրված միջոցառումներին վերաբերող հարցեր:

WEMW Focus 2023-ի շրջանակում հունվարի 24-ին տեղի է ունեցել նաեւ պանելային քննարկում, որտեղ մասնակից երկրները ներկայացրել են իրենց կառույցները, համատեղ արտադրության ռազմավարությունները եւ միջազգային համագործակցության հիմնական առաջնահերթությունները: Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից ելույթ է ունեցել ֆիլմ-հանձնակատար Մելիքսեթ Կարապետյանը՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոնի ռազմավարությունը Հայաստանի մասնակցությամբ եվրոպական համատեղ արտադրությունների ֆինանսավորման գործում» թեմայով:

Նշվում է, որ Տրիեստեի 34-րդ միջազգային փառատոնի շրջանակում հունվարի 25-ին տեղի է ունեցել Իննա Սահակյանի «Ավրորայի լուսաբացը» ֆիլմի ցուցադրությունը: Բացի դրանից, WEMW Focus 2023-ի ներկայացմանը մասնակցած ռեժիսոր Իննա Սահակյանը «Բարս մեդիա» ընկերության «Շեքսպիրի մեղքերը» (պետական աջակցության) նախագծի համար ստացել է նաեւ Բեռլինի կինոշուկայի մասնակցության անվճար հավատարմագրում:

«Երբ Արեւելքը հանդիպում է Արեւմուտքին» կինոարտադրության հեղինակավոր հարթակին մասնակցությունը միտված է կինոկենտրոնի միջազգային կապերի եւ գործունեության ամրապնդմանը, ինչն էլ կնպաստի հայկական կինոժառանգության, դասական եւ ժամանակակից ֆիլմերի տարածմանն ու հանրայնացմանը:

ԼՈՒՐԵՐ

«ՎԱՆԻ» ՆՈՐԵԿՆԵՐԸ

Չարենցավանի «Վանը» ներկայացրել է երկու նորեկների: 23-ամյա կոլումբիացի կենտրոնական պաշտպան Խուան Դանիել Սիֆուենտես Վերգարան «Վանին» է միացել Ուրուգվայի «Ռասինգից», որի հետ նա հաղթել է Երկրորդ դիվիզիոնում եւ ստացել Պրեմիեր լիգայի ուղեգիր. հաղորդում է հայկական ակումբի մամուլի ծառայությունը: Մինչ այդ Դանիելը հանդես է եկել Կոլումբիայի «Ամերիկա Դե Կալիում», որի կազմում 2020 թվականին դարձել է Պրեմիեր լիգայի չեմպիոն: «Վանի» մյուս նորեկը 19-ամյա եզրային կիսապաշտպան Ռենտո Բենգոն է, որն իսպանական ֆուտբոլի սան է: Հասարակածային Գվինեան ներկայացնող Ռենատոն հանդես է եկել «Վալյադոլիդի» եւ «Լա Նուսիայի» Մ-19 թիմերում:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

Երգչուհի Քեթի Փերին խոստովանել է, որ հրաժարվել է Բիլի Այլիշի հետ համագործակցությունից: Փերին հիշել է, որ Capital Records-ի իր գործընկերը խոսել է Այլիշի մասին. «Նա ինձ նամակ ուղարկեց հետեւյալ բովանդակությամբ. «Բարե, նայի՛ր այդ նորահայտ արտիստին, ես կցանկանայի, որ մենք աշխատենք նրա հետ»»: Ըստ Փերիի՝ նա լսել է Այլիշի Ocean Eyes ստեղծագործությունը եւ այն ձանձրալի համարել: Նա երգչուհու հետ համագործակցությունից հրաժարվելը «մեծ սխալ» է անվանել:

ՉԻ ԵՐԿԱՐԱՁԳԵԼ

Թուրինի «Յուվենտուսը» չի երկարաձգի պայմանագիրը աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի կիսապաշտպան Անխել Դի Մարիայի հետ. հաղորդում է իտալական Gazzetta dello Sport-ը: 34-ամյա ֆուտբոլիստի պայմանագիրը նախատեսված է մինչեւ այս մրցաշրջանի ավարտը: Դի Մարիան անցած ամռանն է ազատ գործակալի կարգավիճակում միացել «Յուվենտուսին» Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ից հեռանալուց հետո: Transfermarkt-ը Դի Մարիայի տրանսֆերային արժեքը գնահատում է 10 միլիոն եվրո: Ընթացիկ մրցաշրջանում Դի Մարիան «Յուվենտուսի» հետ բոլոր մրցաշարերում մասնակցել է 15 հանդիպման, խփել է 3 գոլ, կատարել է 5 գոլային փոխանցում:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ 2023»-Ի ԿԱՐԳԱԽՈՍԸ

Հայտնի են «Եվրատեսիլ 2023» մրցույթի կարգախոսը եւ տարբերանշանը: Այս մասին հայտնել է «Հայաստանը՝ Եվրատեսիլում» պաշտոնական ինստագրամյան էջը: «Միավորված երաժշտությամբ». հայտնի է Եվրատեսիլի այս տարվա կարգախոսը: Այն արտահայտում է նախորդ տարվա հաղթող երկրի՝ Ուկրաինայի եւ մրցույթը հյուրընկալող կողմի՝ Միացյալ Թագավորության սերտ գործակցությունը: Երանգները եւս արտացոլում են երկու երկրների դրոշների գույները: Տարբերանշանը գունավոր էլեկտրասրտագրության տեսքով է (ECG), որն արտացոլում է մրցույթի մասնակիցների եւ միլիոնավոր երկրպագուների սրտի բաբախյունը: «Եվրատեսիլ 2023» երգի մրցույթն այս տարի անցկացվելու է Լիվերպուլում. կիսաեզրափակիչները կկայանան մայիսին 9-ին եւ 11-ին, իսկ եզրափակիչը՝ մայիսին 13-ին:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՈՆԻ ԱՌԱՋԱՐԿ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ կառավարական տարբեր կաբինետներում քննարկվում է ԿԳՄՍ նախկին նախարար Վահրամ Դումանյանին նոր պաշտոն տալու մասին հարցը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ նախկին նախարարին կառավարությունից տեսնում են ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի խորհրդականի պաշտոնում եւ ցանկանում են այդ պաշտոնը նրան առաջարկել:

Տեղեկությունը ճշտելու համար ArmLur.am-ը կապ հաստատեց Վահրամ Դումանյանի հետ, որը մեզ հետ զրույցում ասաց, որ այդ մասին հստակ տեղեկություն չունի եւ այս պահին ոչինչ ասել չի կարող:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ ԿԳՄՍ նախկին նախարար Վահրամ Դումանյանը ԿԳՄՍ նախարարի պաշտոնից ազատվելուց հետո այլ պաշտոնի ակնկալիքներ ունի իշխանությունից:

Miss Instagram 2022

Տարվա սկիզբը՝ ամենասպասված իրադարձությամբ: Երեւանում կայացավ Miss Facebook եւ Miss Instagram 2022 նախագծի եզրափակիչ փուլը, որն այս անգամ եւս իր շուրջն էր հավաքել բազմաթիվ աղջիկների՝ պայքարելու ցանկալի տիտղոսի եւ բաղձալի մրցանակի համար:

Ամիսներ շարունակ տեւած մրցույթի թեժ ընթացքին ակտիվությամբ հետեւում էին նաեւ մեր սիրելի համաքաղաքացիները:

Global Media House ընկերության տնօրեն Տաթեւ Ավետիսյանի խոսքով՝ նախագիծն արդեն իսկ սիրված ու հետաքրքիր իրողություն է հայկական իրականության մեջ:

Նախագիծն ամեն տարի լի է նոր ու արժեքավոր իրադարձություններով: Այս տարի եւս արդեն երրորդ տարին անընդմեջ միջազգային հեղինակավոր «Միսս Երկիր» մրցույթի հայաստանյան ներկայացուցիչը ընտրվեց հենց այս նախագծից:

Նախագծի հաջող ընթացքը տպավորել էր ոչ միայն մրցույթի մասնակիցներին եւ մրցույթի ընթացքին հետեւող մեր համաքաղաքացիներին, այլեւ նախագծի շրջանակներում համագործակցող, շուկայում առաջատար դիրքեր զբաղեցնող ընկերություններին, որոնք շեշտում էին մրցույթի արդյունավետության ու ընձեռած հնարավորությունների մասին:

Բազմաթիվ մրցանակներ՝ հայտնի ու ճանաչված բրենդների կողմից, անակնկալներ՝ մրցույթի բոլոր մասնակիցների համար: Շքեղ ու էմոցիաներով լի մրցանակաբաշխության գլխավոր մրցանակներն էին կրուիզային ճանապարհորդությունները Միջերկրական ծովով, որոնց եւ արժանացան Miss Facebook եւ Miss Instagram 2022 տիտղոսակիրները:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

● *Փետրվարի 3-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սեանս՝հոգեթերապեւտի մոտ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ամուսնուս սպանության գործով ես ներգրավված եմ որպես իրավահաջորդ, բայց ինձ չեն հարցաքննում, իսկ հանցագործներին մեղադրանք չի առաջադրվում. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Հասմիկ Սեդրակյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դուք կարող եք վերոնշյալ Ձեր իրավունքներից օգտվել անարգել՝ այդ մասին դիմումներ եւ միջնորդություններ հասցեագրելով քննիչին: Օրինակ՝ եթե Դուք ցանկանում եք որպես տուժող ցուցմունք տալ, իսկ քննիչը չի ցանկանում, ապա գրավոր դիմում ներկայացրե՛ք քննիչին, դիմումը մուտքագրե՛ք քննչական բաժնի քարտուղարություն, եւ քննիչը ստիպված կլինի Ձեզ կանչելու հարցաքննության: Հարկ է նշել, որ քննիչն ինքն է որոշում, թե նախաքննության ընթացքում ինչպիսի քննչական գործողություններ պլանավորի եւ իրականացնի, սակայն ստանալով Ձեր դիմումը՝ քննիչը պարտավոր է 7-օրյա ժամկետում կայացնել որոշում՝ Ձեզ հարցաքննելու կամ դա հետաձգելու մասին: Միաժամանակ, Դուք իրավունք չունեք ծանոթանալ նախաքննության այն տվյալների կամ նյութերի հետ, որոնք Ձեր մասնակցությամբ չեն կազմվել կամ ձեռք բերվել, քանի որ դրանք համարվում են նախաքննական գաղտնիք պարունակող տեղեկություններ եւ ենթակա չեն տրամադրման կամ ծանոթացման տուժողի իրավահաջորդին:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անձը կարող է քրեական գործում ներգրավվել որպես տուժողի իրավահաջորդ, եթե տուժած անձը հանցագործության կատարման արդյունքում մահացել է: Տուժողի իրավահաջորդն ունի մի շարք իրավունքներ, որոնցից կարող է օգտվել: Մասնավորապես, տուժողի իրավահաջորդն իրավունք ունի ծանոթանալ հանցագործություն կատարած անձանց առաջադրված մեղադրանքին, քրեական գործով տալ ցուցմունքներ եւ բացատրություններ, ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու եւ հետազոտելու համար, հայտնել բացարկներ քննիչին, որը, ըստ նրա, կողմնակալ է կամ ցուցաբերում է անգործություն, հարուցել միջնորդություններ (վկաներ հարցաքննելու, ապացույցներ առգրավվելու, խուզարկություններ կատարելու, տեսանյութեր առգրավվելու եւ հետազոտելու եւ այլն), առարկել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ եւ պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողությունների արձանագրության մեջ, ինչպես նաեւ դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության եւ լրիվության կապակցությամբ:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ օրինականացնել 1990-ականներին հորս կառուցած տունը. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Մարիաննա Լեւոնյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ նպատակով անհրաժեշտ է առնվազն երեք հարեւաններից վերցնել հավաստում այն մասին, որ այդ տունը կառուցվել է 1990-ական թվականներին Ձեր հոր կողմից, որը պետք է ներկայացնեք Ձեր հասցեն սպասարկող համատիրություն, իսկ համատիրության բացակայության դեպքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկանք այն մասին, որ տունը կառուցված է 1990-ական թվականներին: Դրանից հետո անհրաժեշտ է դիմել մասնագիտացված չափագրական ծառայություններ մատուցող կազմակերպություն՝ պատվիրելով Ձեր սեփական տան ամբողջական չափագրում: Այնուհետեւ անհրաժեշտ է չափագրական եզրակացությունը, տեղեկանքը, հողամասի սեփականության իրավունքի վկայականը, բնակելի տան լուսանկարները ներկայացնել քաղաքապետարան՝ խնդրելով թույլատրել օրինականացնել կառուցված ինքնակամ շինությունը:

ՀՀ քաղաքաշինության պետական տեսչություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ղեկավարը պարտավոր է Ձեր դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում կայացնել ինքնակամ շինությունը օրինականացնելը թույլատրելու կամ մերժելու մասին որոշում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Մարտունիում

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ գյուղի Ա. Մյասնիկյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Գարիկ Գառնիկի Հովհաննիսյանի, Ռադիկ Էդգարի Թաթոսյանի եւ Վահե Թովմասի Ասատրյանի անունները կրող հուշասենյակի բացման արարողությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.01.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: